

րանքտիր մթնաւ\*)։ Էլան, պառկան մեանչ սարին, քինան։ Դաւիթ քինաւ, խրօխպէր ակախ<sup>1)</sup> չ'տարաւ, հաշիեար<sup>2)</sup> մնաց. էլաւ, իպի Դաւթի անթարու<sup>3)</sup> փէշ էթըլ<sup>4)</sup> ուր տակ, պառկաւ վերայ։

Դաւիթ ակախաւ<sup>5)</sup>, իրիշկից գիշերուան կէսին Սասմայ սա-  
րը գլետիս, տեսաւ, որ լիւս կամար կանգնիր ի։ Դաւիթ զինք է-  
լաւ, էսաց.— Ո՛վ Տէր Աստուած, թի որ խրօխպէրս վիր խանիմ  
քինուց, տ'ըլնը, տ'ասը՝ Դաւիթ վախացաւ, ընձը վիր էխան. որ  
չ'խանիմ, իմ անթարու փէշ էնու տկէն տիւս չի կեայ։

Էխան գտանակ, էթալ զանթարու փէշ կտրից. մնաց խրօխ-  
պօր տակ անթարու փէշ։ Վաստ էրաւ<sup>6)</sup>, գեախ լիւս կինաց. կի-  
նաց, խասաւ վեար լիւսուէն, տեսաւ, որ էնդեղ միծ, ահագին մար-  
մար քեար կայ, մարմար քեարի կէսն ճղուիր ի, լիւս մէչէն կ'բու-  
խայ<sup>7)</sup>։

Դիշիր էր. էլաւ, իրիք ճղեղ<sup>8)</sup> քեաշից պիւլիւր քեարին։ Դար-  
ձաւ, էկաւ մա<sup>9)</sup> խրօխպէր. տեսաւ՝ խրօխպէր ակախիր ի, իլիր ի  
քինուց, նստիր ի\*\*):

Էսաց.— Դաւիթ, տիւ դ'բ'ւր էր կեացի։

Էսաց.— Իրիշկը, խրօխպէր, էն լիւս կ'տեսնաս, էսաց, քենէ

---

1) Քուներ չ'տարաւ։ 2) Արթուն։ 3) Անթարի, գիւղական վեր-  
նազգեստ։ 4) Դրեց, ձգեց։ 5) Չարթնեց։ 6) Երեսը դարձրեց։ 7) Բըլ-  
խել։ 8) Գիծ 9) Մօտ։

\*) Ա. վարիանտով Դաւիթ ժողովրդից բաժանուում է, մե-  
նակ սկսում է պտըտել. Դաւիթ մտնում է «Բալաք բիւրջ-ի մէջ.  
Աստու չրամանով նորա առաջ բացուում են դռները։ Դաւիթ  
ներս է մտնում և ոսկու, արծաթի շեղջերի հետ տեսնում է «ժա-  
մու խանդիրձնիր, անգին թագիր, անգին բիւրվառնիր, անգին խա-  
չիր, անգին շուրջառնիր, ոսկէկուղ աւետրանքտիր»։

\*\* ) Ա. վարիանտով Դաւիթ այս երգն է ասում հօրեղբօրը  
զարթեցնելու համար.

«Խէրախուլթ խրօխպէր, Խէրախուլթ խրօխպէր, վի՛ր իլի,  
Մարմար քեարն ի բացուի, լիւս կամար մէջ կ'փայլի»։

Իսկ Բ. վարիանտում այս երգն է ասում.